

կամ մարդիկ, որոնց թիւը, բարեբախտաբար, օր օրի վրա պակասում է եւ ուրեմն այսօր էլ դեռ պնդում են, թէ արտասահմանի հայութեան ազգային կազմակերպութիւնը վնասակար է Հայաստանի եւ Հայաստանի ներկայ իշխանութեան համար: Ինչո՞ւ է վնասակար — չի հասկացում: Ընդհակառակը, Հայաստանի իշխանութեան անտարբեր կամ բշտամական դիրքը դէպի ամէն բան, որ

կապ ունի արտասահմանի հետ, վնասակար է արտասահմանի հայութեան համար: Եւ ժամանակն է, որ վերջինս էլ հասկանայ, թէ ինքը խորհրդային արտերի պարարտացման ծառայող աղբ չէ, այլ մի կենդանի եւ իրաւահաւասար մասնիկը հայութեան, որ, որպէս այդպիսին, ունի իր ինքնուրոյն ազգային կեանքը կարգաւորող ու դիկավարող ազգային իշխանութիւնը:

ԶՈՒՀԱՃԵԱՆ ԵՒ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԸ

Պոլսահայ երաժշտագէտ Զուհանեանի ծննդեան հարիւրամեակի առթիւ Փարիզի Միւրիւալիթէ մեծ սրահում բեմադրուեցաւ «Լէպլէպիւնի Հօր Հօր»-ը, քիւրքերէն լեզուով: Հայոց ժողովուրդը, տէրտէրով ու վարդապետով, փութացել էր լեցնել սրահը:

Այդ առթիւ կծու բանավեճ առաջ եկաւ մամուլի եւ հասարակութեան մէջ. Պէ՞տք էր բեմադրել «Լէպլէպիւնի»-ն. եթէ պէտք էր, ինչո՞ւ չբեմադրուեցաւ հայերէն լեզուով. եթէ բեմադրուեցաւ քիւրքերէն լեզուով, պէ՞տք է հայ հասարակութիւնը լեցնէր սրահը:

Տխրութիւն է իջնում մարդու վրա, ի տես նման երեւոյթի եւ ի յուր նման հարցերի: Դեռ երէկ էր քիւրքը ամենավայրագ կերպով կոտորեց մեզ ու այսօր էլ շարունակում է արհամարհել, հալածել ու բնաջնջել: Եւ քրքական հալածանքի գոհներն են, կամ կոտորածների գաւակներն են այսօր շտապում բառորոն պանծացնելու համար քիւրք մշակոյթը: Ազգային արժանապատուութեան տարօրինակ ըմբռնում է այս: Յամենայն դէպս, ուրիշ ազգեր այդպէս չեն վարում...

Ասում են՝ Զուհանեանը հայ երաժշ-

տագէտ է եւ, համարեւ մարդ — ինչո՞ւ չպատել: Ինչո՞ւ պատել. եւ «Լէպլէպիւնի Հօր Հօր»-ը հայ մշակոյթի հետ ի՞նչ կապ ունի: Զուհանեանը գերազանցապէս քիւրք երաժշտագէտ է եւ քիւրք մշակոյթի սպասաւոր — ժամանակը գտանք քիւրք բեմի յորելեաններ կատարելու: Եւ ինչո՞ւ մենք պէտք է կատարենք այդ յորելեանը, երբ քիւրքերն իրենք մտած են անտարբեր: Ո՞վ է ստիպում մեզ քիւրքից էլ աւելի քիւրք լինել...

Անասնական ազգայնամոլութիւն չէ, որ պաշտպանում ենք մենք: Ամէն ազգ եւ ամէն ազգի մշակոյթ յարգելի է մեզ համար, բայց չպէտք է մոռանալ երբեք՝ երեկւայ միլիոնաւոր գոհերը, չը պէտք է մոռանալ եւ այսօրւայ մեայլ վիճակը: Կը գայ ժամանակ, երբեւի, որ Զուհանեանի յորելեանն էլ կարելի կը լինի տօնել հեշտ սրտով, բայց այսօր ուրիշ յորելեաններ պէտք է տօնել: Եւ այն հոգեւոր ու աշխարհիկ առաջնորդներն ու գործիչները, որ լեցնել էին Միւրիւալիթէի սրահը ըմբռնելու համար «Լէպլէպիւնի Հօր Հօր»-ի երգերը, պարտաւոր էին այլ վարմունք գոյց տալ...

